Հ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ (1920—1925 ԹԹ.)

Առաջին համաշխարհային պատերազմի նպատակներից մեկը՝ Օսմանյան կայսրության արաբական պրովինցիաների բաժանումն էր։

Ասիական Թուրքիան բաժանելու մասին դաշնակից տերությունների (Անգլիա, Ֆրանսիա և Ռուսաստան) 1915 թ. մարտ-ապրիլ ամիսներին կայացած բանակցությունների ժամանակ Ռուսաստանը հավակնություն էր հանդես բերում Կ. Պոլսի, նեղուցների և Թուրքահայաստանի նկատմամբ[1]։ Ֆրանսիան համաձայն էր Օսմանյան կայսրության բաժանմանը միայն այն պայմանով, որ Սիրիայի և Ադանայի վիլայեթների նկատմամբ ճանաչվեին իր իրավունքները[2]։ Անգլիան պահանջում էր Իրաքը և Պաղեստինը[3] և ձգտում էր ամուր կերպով հաստատվել Եգիպտոսում, իր ձեռքում պահել Հնդկաստանի հեռավոր մատույցները։

Ռուսական և ֆրանսիական իմպերիալիստները ձգտելով դրավել Թուրքական ժառանգության իրենց բաժինը, հիմնականում գործում էին դիվանագիտական միջոցներով։ Իսկ Անգլիան, համաշխարհային պատերազմի արաբական թատերաբեմում միանձնաբար վարելով ռազմական գործողությունները, բնականաբար, մեծ առավելություններ ուներ այնտեղ իր ռազմա-քաղաքական էքսպանսիան տարածելու համար։ Բացի այդ Անգլիան ձգտում էր արաբների միջոցով քայքայել թշնամու թիկունքը։ Այս նպատակով Անգլիան օգտագործում էր արաբների ու թուրքերի միջև գոյություն ունեցող հակասությունները ու պաշտպանում արաբների ազատագրական շարժումը։

Սակայն անգլիական դիվանագետները չկարողացան անմիջապես օգտագործել այդ հակասությունները։ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը պատճառեց արաբական քաղաքական գործիչների շարքերում՝ պատերազմող կողմերի հանդեպ տարվելիք քաղաքականության հարցում։ Նրանք երկընտրանքի առջև կանգնեցին՝ կամ պաշտպանել դաշնակիցներին և անգլո-ֆրանսիական օկուպացիայի փաստի առաջ կանգնել և կամ մասնակցել պատերազմին Թուրքիայի կողմից, այն հեռանկարով, որ վերջինիս հաղթանակի դեպքում ձեռք բերվի արաբների պահանջների բավարարում՝ Օսմանյան կայսրության շրջանակներում։ Սիրիական ազգային բուրժուազիայի ներկայացուցիչների համեմատաբար ոչ մեծ, բայց բավական ազդեցիկ մասը (Արգ էլ Քերիմ Խալիլ, Արդ ար Ռահման Շահբենդեր, Մուհամմեդ քուրդ Ալի և ուրիշներ) պարզ պատկերացնելով Սիրիայի անգլո-ֆրանսիական օկուպացման վտանգը, իսկ մյուս կողմից էլ հավատալով պատերազմի հաղթական ավարտումից հետո արաբական վիլայեթներին լայն ինքնավարություն տալու մասին իթթիհատականների խոստումներին, կոչ էին անում արաբներին հրաժարվել Թուրքերի հետ ունեցած տարաձայնություններից և միանալ նրանց հետ դաշնակիցների դեմ սրբազան պատերազմ մղելու համար[4]։

Ահմեդ Ջեմալ փաշան՝ իթթիհատի եռապետներից մեկը, որ պատերազմը սկսվելուց հետո նշանակվեց Սիրիայում տեղավորված 4-րդ բանակի հրամանատար և զեներալ-նահանգապետ, անձնական կապ էր հաստատում արաբ քաղաքական գործիչների հետ, խոշոր գումարներ տալիս նրանց՝ արաբական մամուլում Թուրքիայի օգտին պրոպագանդա տանելու համար, իսկ հետա-

---

[1] «Раздел Азиатской Турции по секретным документам б. Министерства иностранных дел», под ред. Е. А. Адамова, М., 1924, стр. 163—164.

[2] Р. Пуанкаре, На службе Франции (воспоминания за девять лет). М., 1936, т. 1, стр. 344.

[3] «Раздел Азиатской Турции...», стр. 121—122.

[4] G. Antonius, The Arab awakening. The Story of the arab national movement, London, 1939, p. 55.

զայում թուրքական իշխանությունները իրենք մասսայական տեռոր սկսեցին արաբների դեմ։ Թուրքական իշխանությունների ձեռքն ընկան Սիրիայում գտնվող ֆրանսիական ու անգլիական դեսպանությունների արխիվները, որտեղ եղած փաստաթղթերը ապացուցում էին սիրիական քաղաքական գաղտնի կազմակերպությունների կապը անգլիական և ֆրանսիական կառավարությունների հետ. Բացի այդ, գտնվեցին նաև թուրքերի դեմ ապստամբության կոչ անող թռուցիկներ[5]։ Այս ամենի հետևանքով Ջեմալ փաշան արյունալի պայքար սկսեց արաբ ազգայնականների դեմ։ 1915 թ. օգոստոսին զինվորական դատարանի վճռով Բեյրութում կախաղան հանվեցին արաբ հայտնի քաղաքական գործիչները, որոնք մեղադրվում էին պետական դավաճանության մեջ։ Կատարվեցին մասսայական ձերբակալություններ։ Ջեմալ փաշան ցրեց արաբական զորամասերը և նրանց ուղարկեց Դարդանելի ու կովկասյան ռազմաճակատ։

Թուրքական իշխանությունների շովինիստական, հակաարաբական քաղաքականությունը, ռազմաճակատներում թուրքերի անհաջողությունները, պարենամթերքի և անասունների յոնագրավման հետևանքով առաջացած սովը և մասսաների հակապատերազմական տրամադրությունները ցրեցին Շահբենդերի խմբի թուրքասիրական պատրանքները։ Բուրժուազիայի այս ներկայացուցիչների մոտ կասկած առաջացավ իթթիհատականների անկեղծության մեջ և նրանք անհաշտ դիրք բռնեցին թուրքերի հանդեպ ու թեքվեցին դեպի դաշնակիցները։

Արաբների և թուրքերի միջև հարաբերությունների սրման պայմաններում Հեջազի հաշեմյան ֆեոդալական ընտանիքի ներկայացուցիչ, Մեքքայի շերիֆ Հյուսեյն ալ Հաշիմին կապ հաստատեց Եգիպտոսում անգլիական գերագույն կոմիսար Մակ-Մահոնի հետ, հույս ունենալով անգլիացիների աջակցությամբ Հեջազը և արաբական մյուս երկրները ազատել թուրքական տիրապետությունից։ Իրականության մեջ այս գործարքը ստրատեգիական և քաղաքական մեծ առավելություն էր Անգլիայի համար՝ պատերազմի արաբական թատերաբեմում։ Հյուսեյնի և Մակ-Մահոնի միջև մի քանի ամիս տևող բանակցությունները վերջացան համաձայնությամբ, որով նախատեսվում էր, որ հարմար ժամանակ Հեջազի արաբները թուրքերի դեմ դուրս կգան, իսկ Անգլիան կճանաչի ապագա արաբական պետությունը[6]։

Շերիֆ Հյուսեյնը և արաբ շեյխերը, որոնք առատորեն վարձատրվում էին անգլիական ոսկով[7], խաբվելով Մակ-Մահոնի խոստումներով, 1916 թ. հունիսին, արաբներին ապստամբության հանեցին։ Ապստամբությունը կազմակերպելու և ղեկավարելու գործում մեծ դեր խաղաց անգլիական գործակալ, հետախույզ Լոուրենսը, որը արաբների ապստամբությանը տվեց անգլիական իմպերիալիստների ցանկացած ուղղությունը։

Չնայած Անգլիան, Մակ-Մահոնի համաձայնությամբ, խոստացել էր ճանաչել ապագա արաբական պետությունը, բայց անգլո-ֆրանսիական գաղտնի բանակցություններ էին տեղի ունենում պատերազմից հետո արաբական երկրները անգլո-ֆրանսիական իմպերիալիստների միջև բաժանելու համար։ 1916 թ. մայիսի 16-ին Լոնդոնում կայացած վերջնական համաձայնությամբ, որը հայտնի է Սայկս-Պիկոյի համաձայնություն անունով, Սիրիան բաժին է ընկնում Ֆրանսիային[8]. Սայկս-Պիկոյի համաձայնությունը հետապնդում էր մի այլ նպատակ ևս, այն է՝ ռուսական զորքերին ետ պահել Մոսուլի նավթահանքերի ուղղությամբ շարժվելուց։ Ուստի անգլո-ֆրանսիական դիվանագետները շտապեցին կնքել այս համաձայնությունը, որպեսզի նախօրոք սահմանեին Ռուսաստանի բաժինը Թուրքիայում և թույլ չտային կովկասյան բանակին արշավելու դեպի Իրաք։

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտության գործում զգալի դեր խաղաց արաբական ապստամբական շարժումը։ 1918 թ. սեպտեմբերի 30-ին, անգլիացիներից մի օր առաջ, շերիֆ Հյուսեյնի որդի Ֆեյսալի արաբական հեծյալ զորքերը գրավեցին Դամասկոսը, իսկ հետագայում Համան, Հոմսը, Հալեպը և մեծ աջակցություն ցույց տվին անգլիական զորքերին՝ արաբական շրջաններից թուրքերին արտաքսելու գործում։ Այս իրողությունը խոստովանել են դաշնակից հրամանատարության շատ ներկայացուցիչներ։ Անգլիայի զինվորական գրող Լիդել Հարտը գրել է. «Վերջին հաշվով արաբները միայնակ մաքառում հարված հասցրին 4-րդ բանակին»[9]։

---

[5] امين سعيد، الثورة العربية الكبرى، القاهرة، ج ١، ١٩٣٤، ص ٦٦٠

[6] Лиддель Гарт, Полковник Лоуренс. М., 1939, стр. 39.

[7] Ապստամբության սկզբից նրանք ստացել են ամսական 150.000 ֆունտ ստեռլինգ արաբական բանակը պահելու համար։

[8] С. Ф. Кечекьян, Мандаты Лиги наций в странах арабского Востока. Баку, 1930, стр. 50.

[9] Лиддель Гарт, стр. 152.

1918 թ. վերջերին անգլիական զորքերը օկուպացրին ամբողջ Սիրիան (Սիրիա, Պաղեստին և Լիբանան), սրանք երկիրը բաժանեցին երեք գոտիների՝ հարավային — անգլիական գոտի, որի մեջ մտավ Պաղեստինը, արևմտյան — ֆրանսիական գոտի՝ Լիբանան, Լաթաքիա և Ալեքսանդրետ, արևելյան — արաբական գոտի՝ ներքին Սիրիա՝ Դամասկոսից արևելք, ներառյալ Անդրհորդանանը[10]։ Վերոհիշյալ գոտիները դիտվում էին որպես դաշնակիցների կողմից օկուպացված գոտիներ և ենթարկվում էին Մերձավոր արևելքում դաշնակից զորքերի ընդհանուր հրամանատար ֆելդմարշալ Ալլենբիին։

Արևելյան գոտում, արաբական կառավարություն կազմվելուց հետո, ծավալվեց պետական շինարարություն, ստեղծվեցին բանակի գործերի և լուսավորության ընդհանուր գերատեսչություններ, լույս տեսան բազմաթիվ թերթեր, հիմնվեցին ազգային ակումբներ։ Այն ագիտացիա էր տարվում օտարերկրյա ազդեցության դեմ պայքարելու և ամբողջ Սիրիային (Լիբանանը, Պաղեստինը և Հորդանանը ներառյալ) անկախություն տալու համար[11]։

Հաշվի առնելով, որ դաշնակիցների գերագույն խորհրդի առաջիկա սեսիայում վճռվելու էր նաև Սիրիայի բախտը[12], Դամասկոսի ղեկավար շրջանները 1920 թ. մարտի 6-ին հրավիրեցին համասիրիական կոնգրես, որը Սիրիան հռչակեց անկախ պետություն[13] և Ֆեյսալին ընտրեց թագավոր։ Կազմվեց Սիրիայի պատմության մեջ առաջին ազգային կառավարությունը, որին հանձնարարվեց մշակել պետության սահմանադրությունը և ընտրական օրենքները։ Անկախության հռչակումը նոր դար բացեց Սիրիայի զարգացման համար։

Համասիրիական կոնգրեսի որոշման մասին հայտնվեցին Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարություններին այն հույսով, որ նրանք հարգանքով կվերաբերվեն այդ արդարացի որոշմանը։ Սակայն վերջիններս չճանաչեցին Դամասկոսի կոնգրեսի որոշումը և շտապեցին վերջնականապես իրենց մեջ բաժանել Ազգերի լիգայի սահմանած մանդատները։

Ազգերի լիգայի կանոնադրության 22-րդ հոդվածի հիման վրա ստեղծվեցին A, B, C կատեգորիաների մանդատային տերիտորիաներ։ Մանդատը դիտվում էր որպես «խնամակալություն» իբրև «քաղաքակրթության սրբազան միսիա»։ Մանդատային սիստեմի գաղութային էությունը մերկացրել է Վ. Ի. Լենինը։ Նրա բնորոշմամբ, «դրանք գաղութային կախյալ երկրներ են, իրավաբանորեն իրավազուրկ բնակչությամբ երկրներ, որոնց վրա իշխելու մանդատ է տրված ֆինանսական ավազակներին»[14]։

Ի պատասխան Դամասկոսի կոնգրեսի որոշման, դաշնակից կառավարությունները 1920 թ. ապրիլին Սան-Ռեմոյում հրավիրված դաշնակիցների գերագույն խորհրդի կոնֆերանսում որոշեցին հաստատել արաբական երկրների մանդատների բաժանումը և այդ մտցնել Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագծի մեջ։ Սիրիայի և Լիբանանի մանդատները տրվեցին Ֆրանսիային, իսկ Պաղեստինի ու Իրաքի մանդատները՝ Անգլիային։

Սովետական կառավարությունը իր ժամանակին մերկացրել է մանդատային սիստեմի թալանչիական էությունը, հայտարարելով, որ Ռուսաստանի կառավարությունը չի ճանաչում միջազգային ռեժիմի այս նոր ձևը և բացասաբար է վերաբերվում Պաղեստինում, Սիրիայում և մանդատային ուրիշ տերիտորիաներում ստեղծված ռեժիմի հանդեպ[15]։

---

10 1919 թ. սեպտեմբերի 15-ին Լոնդոնում ստորագրված անգլո-ֆրանսիական համաձայնությամբ, անգլիական զորքերը դուրս եկան Հալեպից, Դամասկոսից և Լիբանանից, բայց նրանք դեռ մնացին Անդրհորդանանում։ Լոնդոնի համաձայնությամբ, Անդրհորդանանը համարվում էր անգլիական ենթամանդատային տերիտորիա։

11 امين سعيد، الثورة .. ج ٢، ص ٥٣٠

12 1919 թ. խաղաղության կոնֆերանսում սակարկություն տեղի ունեցավ Սիրիայի մանդատի հավակնորդներ՝ անգլո-ֆրանսիական և ամերիկյան իմպերիալիստների միջև։ Այս պայքարը կասեցրեց սիրիական հարցի լուծումը կոնֆերանսում։

13 Սիրիայի անկախ պետության կազմի մեջ են մտցվում երկրի առափնյա և ներքին շրջանները, Լիբանանն ու Պաղեստինը։ Հորդանանը համարվում էր ներքին Սիրիայի մասը։ Տե՛ս

امين سعيد، ج ٢، ص ١٤٠

14 Վ. Ի. Լենին, հ. 31, էջ 268։

15 Внешняя политика СССР, Сборник документов, т. 2, 1921—1924, М., 1944, стр. 784.

1920 թ. մայիսի 1-ին Ֆրանսիայի վարչապետ Միլլերանը հեռագրով Ֆեյսալին հայտնեց դաշնակիցների գերագույն խորհրդի որոշումը՝ Սիրիան որպես ենթամանդատային տերիտորիա, Ֆրանսիայի տիրապետությանը հանձնելու մասին։ Նույն բովանդակությամբ հեռագիր ուղարկեց նաև Ալլենբիին։

Սան-Ռեմոյում ընդունված որոշումը բողոքի մեծ ալիք առաջացրեց արաբական երկրների ժողովուրդների մեջ։ Սիրիայի բոլոր շրջաններում տեղի ունեցան հակաիմպերիալիստական ցույցեր։ Սիրիական ժողովուրդը լավ էր հասկանում, որ Սիրիայի վզին փաթաթված մանդատային սիստեմը ֆրանսիական տիրապետության հաստատման քողարկված մի ձև է, ուստի նա վճռում է չընդունել մանդատը և պայքարել իր ազգային անկախության համար։ Կազմվում է ազգային պաշտպանության կառավարությունն՝ Հաշեմ Աթասիի գլխավորությամբ։ Համասիրիական կոնգրեսի մարտի 8-ի նիստում արտաքին գործերի մինիստր Շահբենդերի հրապարակած կառավարական ծրագրի հիմնական քաղաքական գիծը հանդում էր հետևյալին.

1. Սիրիայի լրիվ անկախության պաշտպանում.

2. Երկրի միասնության պահանջ՝ նրա բնական սահմաններում և հարավային մասը հրեական ազգային օջախի վերածելու մասին սիոնիստների պահանջի մերժում[16].

3. Պայքար երկրի ներսում օտարերկրյա ամեն մի միջամտության դեմ[17]։ Նոր կազմված ազգային պաշտպանության կառավարությունը սկսեց կենսագործել իր ծրագիրը և պատրաստվեց պաշտպանել երկիրը։ Հայտարարվեց ընդհանուր զորակոչ։ Համասիրիական կոնգրեսը որոշեց զինված դիմադրություն կազմակերպել ֆրանսիական զորքերի հնարավոր ներթափանցմանը արևվելյան զոնա և երկրում հայտարարեց պատերազմական վիճակ։

Սիրիական ժողովրդի ազգային անկախության համար պայքարելու վճռականությունը անհանգստացրեց ֆրանսիական գեներալներին։ Վերջիններս որոշեցին ազատվել Դամասկոսի կառավարությունից և զենքի ուժով ժողովրդի վզին փաթաթել մանդատային ռեժիմը։ Սիրիայում և Լիբանանում ֆրանսիական զորքերի ընդհանուր հրամանատար գեներալ Գուրոն հուլիսի 14-ին Բեյրութից Ֆեյսալին ուղարկած վերջնագրով պահանջեց անվերապահորեն ընդունել ֆրանսիական մանդատը, վերացնել ընդհանուր զինապարտության մասին օրենքը, Ռայակ-Հալեպ երկաթուղին հանձնել ֆրանսիական հրամանատարությանը[18]։ Վերջնագիրը ամբողջությամբ ընդունելու համար Գուրոն շորսօրյա ժամկետ սահմանեց։

Այդ ժամանակ Ֆեյսալը վերջնականապես համոզվեց, որ իր «դաշնակից» Անգլիան խաբել է իրեն և չի կատարում արաբներին տված իր խոստումը։

Նախքան Գուրոյի վերջնագրի վերաբերյալ որոշում ընդունելը, սիրիական կառավարությունը Նուրի Սաիդին և էմիր Արսլանին ուղարկեց Հայֆա՝ ստեղծված դրության շուրջը Ալլենբիի հետ բանակցելու համար։ Վերջինս խորհուրդ տվեց ընդունել ֆրանսիական առաջարկները և փոխըմբռնման հասնել Գուրոյի հետ։ Անգլիայի այս քաղաքականությունը բացատրվում էր Սիրիայի հաշվին կատարված իմպերիալիստական նոր գործարքով։ Սայկս-Պիկոյի համաձայնությամբ, հյուսիսային Իրաքը հանձնված էր Ֆրանսիային, սակայն 1919 թ., անգլո-ֆրանսիական նոր համաձայնությամբ, Ֆրանսիան հրաժարվում էր հյուսիսային Իրաքից հօգուտ Անգլիայի և փոխարենը իրավունք էր ստանում օկուպացնելու Սիրիայի ներքին շրջանները և վճռելու Ֆեյսալի բախտը. միևնույն ժամանակ նա պետք է ստանար Իրաքի նավթի քսանհինգ տոկոսը։

Սիրիական ժողովրդի համար անսպասելի չէին ֆրանսիական զաղութարարների դիտավորությունները. նա համոզված էր, որ գործը չի վերջանալու առանց վճռական պայքարի։ Ուստի կառավարությունը ձեռնարկում է քաղաքական, ռազմական և ուրիշ միջոցառումներ՝ կապված երկրի գրության հետ։ Ֆեյսալի եղբայր՝ էմիր Զեյդը նշանակվում է բանակի ընդհանուր հրամանատար, ստեղծվում են պաշտպանության կոմիտեներ։

Սակայն, դժբախտաբար, Գուրոյի վերջնագիրը պառակտում է առաջացնում ազգային պաշտպանության կառավարության մեջ։ Ֆեյսալը ամեն կերպ աշխատում էր, որ կառավարությունը ընդունի ֆրանսիական վերջնագիրը։ Նա իր որոշումը պատճառաբանում էր նրանով, որ քաղաքական

---

16 1917 թ. նոյեմբերի 2-ին Լլոյդ Ջորջի կառավարության արտաքին գործերի մինիստր լորդ Բալֆուրը հրապարակում է մի դեկլարացիա Պաղեստինում հրեական «Ազգային օջախ» ստեղծելու մասին։

17 Амин Саид, Восстания арабов в XX веке, М., 1964, стр. 91.

18 امين سعيد الثورة.... ج ٢، ص ١٦١.

և ռազմական գործոնները[19] ստիպում են իրեն ընդունել Գուրոյի առաջարկները։ Նա համառորեն պնդում էր, որ երկու շարիքից պետք է ընտրել փոքրագույնը և, որ Սիրիան իր ներկա վիճակով ու սահմանափակ հնարավորություններով ի վիճակի չէ դիմադրելու ֆրանսիացիներին։ Կաբինետի անդամների մեծամասնությունը Ֆեյսալի գլխավորությամբ անվերապահորեն ընդունեց Գուրոյի վերջնագիրը։ Այսպիսով, Ֆեյսալը հույս ուներ, որ ֆրանսիական զորքերը չեն գրավի Դամասկոսը և կպահպանվի իր թագը։

Գուրոյի վերջնագիրը կառավարության կողմից ընդունվելու լուրը կայծակի արագությամբ տարածվեց ամբողջ երկրում։ Ազգային պաշտպանության կոմիտեն հուլիսի 20-ին մեծ ցույց կազմակերպեց Դամասկոսում, ցուցարարները կառավարությունից պահանջում էին դիմադրել օկուպանտներին և պաշտպանել երկրի անկախությունը։ Նրանք հարձակվեցին Դամասկոսի բերդում գտնվող զինապահեստի վրա և գրավեցին զենքերը[20], որպեսզի հակահարված տան ազրեսորներին։ Սակայն Ֆեյսալի հրամանով Էմիր Զեյդը բանակի օգնությամբ ցրեց ցուցարարներին, որի ընթացքում սպանվեցին 200 հայրենասերներ[21]։

Չնայած Ֆեյսալի կառավարությունը ընդունեց վերջնագիրը, բայց Գուրոյի հրամանով ֆրանսիական զորքերը շարժվեցին դեպի Դամասկոս[22]։

Ֆրանսիական զորքերի Դամասկոսի ուղղությամբ շարժվելու լուրը կատաղեցրեց Ֆեյսալին։ Ֆրանսիական զորքերի առաջխաղացումը կասեցնելու և արյունահեղությունից խուսափելու մասին Գուրոյին ուղարկած նրա հեռագրերը ոչ մի արձագանք չգտավ։ Միայն այդ ժամանակ Ֆեյսալը հասկացավ, որ խաբված է, և պատերազմ հայտարարեց Ֆրանսիային։ Նրա հրապարակած մանիֆեստում կոչ էր արվում պաշտպանել հայրենիքը, ժողովրդի պատիվն ու կրոնը[23]։ Ֆրանսիական զորքերին դիմադրելու համար կանոնավոր բանակի մի ջոկատով Մայսալունի կիրճն է մրտնում ռազմական մինիստր մայոր Յուսուֆ Ազման։ Այստեղ հավաքվեցին նաև Դամասկոսի բնակիչներից կազմված կամավորական խմբերը, որոնք զինված էին հին զենքերով և թրերով։

Հուլիսի 24-ին տեղի ունեցած ճակատամարտում Դամասկոսի պաշտպանները պարտություն կրեցին ֆրանսիական գերակշիռ ուժերից[24]։

Պարտությունից հետո Ֆեյսալը Ալա ադ Դին Դրուրիի գլխավորությամբ կազմում է կապիտուլյանտական նոր կառավարություն։ Ալա ադ Դին Դրուրին, որը ֆրանսիական իմպերիալիստների թունդ երկրպագուն էր և մանդատի կողմնակից[25], միջնորդի դեր պիտի խաղար Ֆեյսալի և օկուպանտների միջև։

Հուլիսի 25-ին ֆրանսիական զորքերը շարժվեցին դեպի Դամասկոս։

Նույն օրը Դամասկոսի կայազորի պետ Նուրի Սաիդը կապ հաստատելով ռազմաճակատի ֆրանսիական հրամանատարության հետ, հայտնում է, որ ֆրանսիական զորքերը կարող են մրտնել Դամասկոս[26]։ Դամասկոսի գրավումով ամբողջ իշխանությունը անցավ Սիրիայում ֆրանսիական գերագույն կոմիսար՝ գեներալ Գուրոյի ձեռքը, որը հետագայում հրով և սրով կարգ հաստատեց օկուպացված երկրում[27]։ Ինչ վերաբերում է Ֆեյսալին, ապա նա, ֆրանսիական էքսպեդիցիայի զեկավար գեներալ Տուպայի պահանջով, իր շքախմբով և ընտանիքով հեռացավ Սիրիայից և մեկնեց Եվրոպա[28]։

Զավթելով երկիրը ֆրանսիական օկուպացիոն իշխանությունները սկսեցին դատաստան տես-

---

19 Ֆեյսալը «Քաղաքական և ռազմական գործոնների» փաստարկումով նկատի ուներ այն հանգամանքը, որ անգլիական դաշնակիցը լքել էր իրեն, իսկ կառավարությունը չէր կարողացել կենսագործել երկրի պաշտպանության միջոցառումների մասին որոշումը։

20 «Новейшая история стран зарубежного Востока», М., 1954, ч. I, стр. 323.

21 G. Antonius, p. 308.

22 Գուրոն ագրեսիվ իր այդ քայլը պատճառաբանեց նրանով, որ վերջնագիրը ընդունելու մասին Ֆեյսալի հեռագիրը սահմանված ժամկետին չի ստացել։ Ամին Սաիդի ասելով, ֆրանսիացիները դիտավորյալ կերպով փչացրել են Բեյրութ-Դամասկոս հեռագրագիծը։

23 امين سعيد، الثورة...، ج ٢، ص ١٦١.

24 Ֆրանսիական 60 հազարանոց բանակի դեմ կռվում էին սիրիական 10 հազար հայրենասերներ։ Հուլիսի 24-ը Սիրիայում ամեն տարի նշվում է, որպես ազգային սգի օր։

25 امين سعيد، الثورة...، ج ٢، ص ٧٩١.

26 „The Times", 29 july 1920, նաև امين سعيد...، ص ٧٩١.

27 Китайгородский, Сирия в огне восстаний, М., 1925, стр. 32.

28 Հետագայում անգլիացիները Իրաքի գահին նստեցրին Ֆեյսալին։

նել Դամասկոսի պաշտպանների ու ազատագրական շարժման մասնակիցների հետ։ Ֆրանսիական իշխանությունների դեմ թշնամական գործունեության համար ձերբակալվեցին մեծ թվով ազգային գործիչներ (Քամիլ էլ Գասար, Խաուֆիկ էլ Յազրչի, Շուքրի Քուաթլի, Ռիադ էլ Սոլխ և ուրիշներ), բռնագրավվեց նրանց ամբողջ ունեցվածքը. ամենափոքր զժգոհության համար պատժիչ ջոկատները այրում էին գյուղերը, ոչնչացնում ցանքերը. ամեն տեղ գործում էին զինվորական դատարանները։ Սիրիական քաղաքական կազմակերպությունները արգելվում են, ազգային մամուլի վրա սահմանվում է խիստ գրաքննություն։ Բացի այդ, սիրիական կառավարությանը ուղղված վերջնագրում պահանջվում էր՝ 10 միլիոն ֆրանկի ռազմական հատուցում, սիրիական բանակի զինաթափում և նրա զենքերի ու զինամթերքների հանձնումը ֆրանսիական բանակին, դիմադրության գլխավոր հանցագործներին զինվորական դատարանին հանձնումը, Ֆեյսալի թագավորության վերացում, քաղաքացիական բնակչության զինաթափում և այլն[29]։

Ալա էդ Դին Դրուզի փաշայի կառավարությունը, որը կազմված էր ֆրանսիական մանդատի կողմնակից բուրժուա-կալվածատիրական տարրերից, պատրաստակամություն հայտնեց կենսագործելու ֆրանսիական առաջարկները և համագործակցելու մանդատային իշխանությունների հետ։

Օկուպանտները կարծում էին, որ Մայսալունի մարտերից հետո սիրիացիները երբեք ի վիճակի չեն լինի նորից ապստամբելու իրենց դեմ։ Սակայն սիրիական ազատասեր ժողովուրդը իրեն պարտված չհամարեց. Մայսալունի ճակատամարտը նրա համար դարձավ ազատագրական պայքարի սկիզբը միայն։ Դամասկոսի մոտ կրած պարտությունը չդադարեցրեց սիրիական ժողովրդի ազատագրական պայքարը։ «Արաբական բազմաթիվ հրոսակախմբեր (այսինքն պարտիզանական խմբերը — Հ. Ս.),— գրել է Յունգը,— շարունակում էին հուզումները ամբողջ երկրում»[30]։ 1920 թ. Սիրիան ապստամբությունների եռուն շրջանի մեջ էր գտնվում, որոնք ուղղված էին ֆրանսիական մանդատի դեմ[31]։

1920 թ. օգոստոսին, այսինքն ֆրանսիական զորքերի կողմից Դամասկոսը գրավելուց մեկ ամիս հետո, Հաուրանի շրջանում սկսվում է գյուղացիական ապստամբություն։ Ապստամբ գյուղացիները հրաժարվում են ռազմատուգանք վճարել և ընդհանրապես չեն ցանկանում մանդատային ռեժիմը ճանաչել։ Ռազմատուգանքը հավաքելու համար տեղական շեյխերի հետ բանակցելու եկած վարչապետ Դրուզի փաշան և նրան ուղեկցող չորս մինիստրներ խուրբեթ էլ Գազալա կայարանում հարձակման են ենթարկվում գյուղացիների կողմից. սպանվում են Դրուզի փաշան, խորհրդակցական խորհրդի նախագահ Ադել աս Ռահման ալ Յուսուֆը և գնացքում գտնվող ֆրանսիական զինվորներ[32]։ Դամասկոսից ուղարկված պատժիչ էքսպեդիցիան մարտի է բռնվում ապըստամբների հետ՝ Քիսվա գյուղի մոտ։ Շարունակելով իրենց առաջխաղացումը, ֆրանսիական զորքերը մեկ ամսից ավելի մարտեր մղեցին Հաուրանի գյուղացիության դեմ, որոնց գլխավորում էին մանր կալվածատերեր — շեյխեր Իբրահիմ աս Սալեհը, Իսմայիլ ալ Հարիրին, Ահմեդ աս Ռիֆաին և ուրիշներ։ Ֆրանսիական ինքնաթիռները և հրետանին ոմրակոծում էին գյուղերը, իսկ զինվորները այրում տներ, թալանում ու գնդակահարում գյուղացիներին[33]։

Հազիվ էին վերջացել այս արյունալի գործողությունները, երբ 1920 թ. վերջերին նոր ուժով ապստամբություն ծավալվեց Սիրիայի հյուսիսային մասերում, Հալեպի և Լաթաքիայի շրջաններում։ Ֆրանսիական վերջնագիրը ընդունելուց հետո Դամասկոսի կառավարությունը Հալեպի շրջանի բնակչությունից պահանջում էր ոչ մի դիմադրություն ցույց չտալ ֆրանսիական զորքերին Հալեպը օկուպացնելու ժամանակ։ Չնայած այս դավաճանական հրահանգին, հայրենասեր Իբրահիմ Հանանոն նահանգի հյուսիսային մասերում կազմակերպում է պարտիզանական ջոկատներ[34], որոնք բազմաթիվ ճակատամարտերում պարտության մատնելով ֆրանսիական զորքերին, իրենց հսկողության տակ էին պահում լայն տարածություններ։ Իբրահիմ Հանանոյի պարտիզանական ջոկատներին միացան շեյխ Սալեհ Ալիի ղեկավարությամբ գործող Լաթաքիայի ալավի գյուղացիները։ Հանանոյի և Սալեհ Ալիի միացյալ ջոկատները մեծ վնաս հասցրին օկուպանտներին։

---

[29] Амин Саид, Восстания арабов..., стр. 102.

[30] Eugene Young, La Révolte arabe, Paris, 1925, v. II, p. 151.

[31] René de Fertet, La France puissance mandataire en Syrie et au Liban, Beyrouth, 1926, p. 51.

[32] امين سعيد، الثورة...، ج ٣، ص ٥٤٢.

[33] امين سعيد، ص ٦٤٢.

[34] Բուրժուական պատմաբան Լոնգրիգը պարտիզաններին ներկայացնում է որպես թալանչիների, որոնք իբր թե հրահրվել են թուրքերի կողմից։ Տե՛ս S. H. Longrigg, Syria and Lebanon under French Mandate, London, 1958, p. 121.

1921 թ. արաբ պարտիզանները կռիվներ էին մղում ֆրանսիական պատժիչ ջոկատների դեմ Կունեյտրա քաղաքի շրջակայքում, Դամասկոսից 63 կմ հարավ-արևմուտք։ Նրանք հարձակվեցին Կունեյտրայի ֆրանսիական պահակախմբի վրա, զինաթափեցին այն և սպանեցին պարետին։ Պարտիզանների դեմ կռվելու համար Դամասկոսից նորանոր ուժեր էին ուղարկվում[35]։

Ալա էդ Դին Դրուբիի սպանությունից հետո ֆրանսիացիները սիրիական կառավարության ղեկավար նշանակեցին Հազզի ալ Ազմային, որը դարձավ նրանց հլու կամակատարը։ 1921 թ. հունիսին դերագույն կոմիսար Գուրոն Հազզի ալ Ազմայի ուղեկցությամբ մեկնեց Կունեյտրա. գեռ քաղաքին չհասած պարտիզանները գնդակոծեցին Գուրոյի մեքենան[36], սպանվեց թարգմանի սպան, ծանր վիրավորվեց Հազզի ալ Ազման։

Օկուպանտների դրությունը Սիրիայում այնքան խախուտ էր, որ նրանք համաձայնություն կնքեցին քեմալական Թուրքիայի հետ, որպեսզի հնարավորություն ստանան հյուսիսային Սիրիայում ավելի մեծ ուժերով պայքարելու պարտիզանների դեմ։ 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված ֆրանս-թուրքական պայմանագրով Ֆրանսիան պարտավորվեց իր զորքերը դուրս բերել Կիլիկիայից և Ալեքսանդրետի սանջաքին ինքնավարություն տալ, որի փոխարեն Թուրքիան ճանաչում էր Սիրիայի բռնագրավումը Ֆրանսիայի կողմից։ Այսպիսով, ֆրանս-թուրքական սահմանում ռազմական գործողությունների դադարեցումով ֆրանսիական հրամանատարությունը կարողացավ մեծ թվով զորք կենտրոնացնել հյուսիսային Սիրիայում։ Պարտիզանական ջոկատներին հետապնդող ֆրանսիական զորքերի ընդհանուր թիվը հասավ 30 հազարի. այդ զորքերը գնդապետներ Գրանկուրի, Նեյգարի, Ֆյուքի և ուրիշների հրամանատարության տակ Համայից մինչև Միջերկրական ծով և ամբողջ հյուսիսային Սիրիայով անցնելով ճնշեցին ապստամբության օջախները։

1921 թ. ապստամբության դրոշ են բարձրացնում Ջեբել-Դրուզի գյուղացիները և Եփրատ գետի հովտի բեդվին ցեղերը։ 1922 թ. հակաիմպերիալիստական ցույցեր տեղի ունեցան Դամասկոսում և Սիրիայի ուրիշ քաղաքներում. ցույցերի մասնակիցները պահանջում էին վերացնել մանդատային ռեժիմը, Սիրիայից դուրս բերել օկուպացիոն զորքերը և ճանաչել երկրի անկախությունը։ Ֆրանսիական զորքերը գնդակոծեցին ցուցարարներին, ձերբակալեցին սիրիական ազգային բուրժուազիայի ներկայացուցիչներ՝ հակաիմպերիալիստական շարժման ղեկավարներ Աբդ ուռ Ռահման Շահբենդերին, Հասան ալ Հաքիմին, Սաիդ Հայդարին և ուրիշների[37]։ Ֆինվորական դատարանը նրանց դատապարտեց 5—20 տարվա բանտարկության. այս կապակցությամբ Դամասկոսում և ուրիշ քաղաքներում բողոքի ընդհանուր գործադուլ հայտարարվեց. հինգ օր անընդհատ փակ էին բոլոր հիմնարկ-ձեռնարկությունները, արհեստանոցները, խանութները, դադարել էր տրանսպորտի շարժումը[38]։

Ֆրանսիական օկուպանտները խիստ ճնշում էին գործադրում նաև արաբական մամուլի վրա. նրանք փակում էին արաբական թերթերը, տուգանում հրատարակիչներին։ Այս բոլորը արվում էր այն պատճառով, որ արաբական թերթերը քննադատում էին մանդատային իշխանությունների գործունեությունը։ Ֆրանսիական իշխանությունները արաբական բոլոր դպրոցներում պարտադիր կարգով մտցրին ֆրանսերեն լեզվի դասավանդում, որպես պաշտոնական լեզու[39]։

Այսպիսին էր ֆրանսիական իմպերիալիստների՝ երկրում հաստատած քաղաքական ռեժիմը, որն առաջ բերեց աշխատավոր մասսաների խիստ ատելությունն օկուպանտների հանդեպ և նպաստեց հակաիմպերիալիստական պայքարի նոր վերելքին։

1923 թ. սկզբներին քոչվոր արաբների հակաֆրանսիական ելույթները այնքան ուժեղացան, որ օկուպացիոն իշխանությունները «հանցանքի» համար պատասխանատվությունը սկսեցին դնել այն ցեղերի վրա, որի տերիտորիայում կատարվում էր «հանցանքը»[40]։ Դեռ ավելին, ֆրանսիական իշխանությունները Դեյր ալ Զորի շրջանում զինաթափեցին Շամմար ցեղի բեդվին ջոկատներին, որոնք զինված էին ֆրանսիական զենքերով և ծառայում էին օկուպանտներին, պահպանելով ֆրանսիական տրանսպորտի երթևեկությունը Դեյր Զորի ու Մոսուլի միջև։

Վերջապես 1922—1923 թթ. ընթացքում գյուղացիական ապստամբություններ բռնկվեցին

---

35 «Известия», 25 марта 1921.

36 «Известия», 6 сентября 1921.

37 Арабы в борьбе за независимость, М., 1957, стр. 214.

38 «Известия», 21 апреля 1922. Նաև امين سعيد، ص ١٥١.

39 Велерс Жак, Крестьяне Сирии и Ливана, пер. с французского языка, М., 1952, стр. 198.

40 «Известия», 11 апреля 1923.

Բնքաայի հովտում Մուլհիմ Կասեմի և Լաթաքիայում՝ Հուլեյման Մուրշիդի ու Օմար ալ Բայթարի ղեկավարությամբ. գյուղացիները հրաժարվում էին հարկ վճարել օկուպանտներին։ Չնայած ապրստամբների դեմ կիրառվող վայրագ դատաստանին, ֆրանսիացիներին չհաջողվեց վերջնականապես ճնշել ապստամբությունը Սիրիայում։ Գեներալ Սառայը ֆրանսիական պաշտոնական մամուլում իր գրած հոդվածում նշում էր. «միայն 1922 թ. սիրիացիները ապստամբել են 35 անգամ, որի հետևանքով ֆրանսիական բանակը տվել է հինգ հազար սպանվածներ»[41]։

1920—1925 թթ. ընթացքում, այսինքն մինչև 1927 թ. Ջեբել-Դրուզի ապստամբության բռնկիգբը, Սիրիայում անընդհատ շարունակվում էին գյուղացիական շարժումները, որոնց նպատակն էր երկրից դուրս վռնդել օտարերկրյա նվաճողներին։ Մանր կալվածատեր-շեյխերի կամ ժողովրդի միջից առաջ քաշված առաջնորդների կողմից ղեկավարվող այս տարերային ապստամբությունները վկայում էին գաղութային սիստեմի խորացող ճգնաժամի և արաբ գյուղացիության խորը ատելության մասին ֆրանսիական իմպերիալիզմի հանդեպ։ Ֆրանսիական զինվորականության Սիրիայում «կարգ ու կանոն» հաստատելու հինգ տարիների փորձը սիրիացիներին ցույց տվեց, որ մանդատային ռեժիմը՝ օկուպանտների տեռորի ռեժիմ է և որ միայն ուժով կարելի է վերջ տալ այդ ռեժիմին։

1920—1924 թթ. հակաիմպերիալիստական պայքարի գլխավոր ուժը արաբ գյուղացիությունն էր։ XX դարի առաջին քառորդում քաղաքական հրապարակ եկած բանվոր դասակարգը դեռ թույլ էր և փոքրաթիվ. այնուամենայնիվ վերոհիշյալ տարիներին Սիրիայի բանվորները մասնակցում էին հակաիմպերիալիստական ցույցերին, գործադուլներին և պարտիզանական խմբերի շարքերում կռվում օկուպանտների դեմ։ Նրանք միևնույն ժամանակ պայքարում էին իրենց տնտեսական ու քաղաքական իրավունքների համար։ Բանվորների գործադուլային շարժումը մեծ չափով նպաստեց նրանց դասակարգային գիտակցության աճմանը և բանվորական ուժեղ կազմակերպությունների ստեղծմանը։

Սիրիայի աշխատավոր մասսաների հետ միասին ազգային-ազատագրական, հակաիմպերիալիստական պայքարին մասնակցում էր նաև ազգային բուրժուազիան, ղեկավարում էր այդ շարժումը օկուպանտներին երկրից դուրս հանելու համար։ Սակայն նրա դիրքը հետևողական չէր, ֆրանսիական զորքերի կողմից Դամասկոսը գրավելուց հետո բուրժուազիան համարյա դադարեցրեց հակաիմպերիալիստական պայքարը երկրի ներսում և իր քաղաքական գործունեության կենտրոնը տեղափոխեց Ժնև, իսկ երկրի ներսում նրա քաղաքական ակտիվությունը արտահայտվում էր հակաիմպերիալիստական ցույցերին մասնակցելով։ Ժնևում բուրժուական քաղաքական կազմակերպությունները Սիրիայի պահանջների մասին անընդհատ հանրագրեր և բողոքի հեռագրեր էին ուղարկում Ազգերի լիգային, սակայն նրանց աղերսանքները ոչ մի արդյունք չտվեցին և հեղափոխական շարժման հասունացմանը զուգընթաց նրանք փոխեցին իրենց տակտիկան ու մասնակցեցին 1925 թ. ապստամբությանը։

Սիրիայում արգելված «Սիրիական միասնություն» և «Իսթիքլալ» կուսակցությունների նախաձեռնությամբ 1921 թ. սեպտեմբերին Ժնևում հրավիրվեց «Սիրիա-պաղեստինյան կոնգրես», որտեղ ընդունվեց սիրիական բուրժուազիայի պահանջների հետևյալ ծրագիրը.

1. Սիրիայի միասնություն.

2. Օտարերկրյա օկուպացիոն բանակների դուրս հանումը Սիրիայից, Լիբանանից և Պաղեստինից.

3. Արաբական երկրների բաժանման մասին գաղտնի պայմանագրերի ոչնչացում.

4. Մանդատի վերացումը.

5. Ազգերի լիգայի մեջ Սիրիայի, Պաղեստինի և Լիբանանի ընդունումը[42]։ Սիրիական բուրժուազիայի այս ծրագիրը, անկասկած, պարունակում էր առաջադիմական և հակաիմպերիալիստական պահանջներ, սակայն նրանում չէր նշված այդ ծրագիրը կենսագործելու ոչ մի միջոց, նրանում ոչ մի խոսք չկար երկրում հողային ռեֆորմներ անցկացնելու մասին։ Կոնգրեսը ընտրեց

---

[41] Амин Саид, стр. 109.

[42] سامى الكيالى، صراع فى سبيل القومية العربية، حلب، ١٩٥٩ ص ٤٣.

Ամին Սաիդի գրքում մեջբերված պահանջների թվում կա նաև Պաղեստինում հրեական ազգային օջախ ստեղծելու մասին Բալֆուրի դեկլարացիան չեղյալ հայտարարելու կետը։

մշտական գործող օրգան «Սիրիա-պաղեստինյան կոնգրեսի գործադիր կոմիտե...»[43], որի կենտրոնը գտնվելով Կահիրեում, վերոհիշյալ պահանջների կենսագործման համար աշխատանքներ էր տանում Ազգերի լիգայի անդամ պետությունների ներկայացուցիչների շրջանում։ Այսպիսով, սիրիական բուրժուազիայի վտարանդիության մեջ գտնվող քաղաքական կազմակերպությունները սահմանափակվում էին Ազգերի լիգային հուշագրեր ուղարկելով, մյուս կողմից էլ երկրում շարունակվող ժողովրդական շարժումների վրա իրենց ղեկավարությունը չկորցնելու համար ապրստամբներին փող և զենք էին մատակարարում։

Օկուպացիոն իշխանությունները ամեն կերպ ձգտում էին ջլատել Սիրիայի հայրենասիրական ուժերի միասնությունը և, հետևելով «բաժանիր, որ տիրես» սկզբունքին, նրանք թուրքական տիրապետության ժամանակ մի ամբողջություն կազմող երկիրը արհեստականորեն մասնատեցին մանր «պետություններիս՝ Դամասկոսի և Հալեպի պետության, իսկ գերագույն կոմիսարի 1920 թ. սեպտեմբերի 1-ի դեկրետով ստեղծվեց «Մեծ Լիբանանի պետությունը», որի կազմի մեջ մտավ նաև, բացի լեռնային Լիբանանից, որը թուրքերի ժամանակ ինքնավար էր, Տրիպոլին, Սայդան, Բեքաան, Սուրը և Բեյրութի շրջանը։ Ստեղծելով այս պետությունը ֆրանսիական իշխանությունները նպատակ ունեին կրոնական թշնամություն հրահրել, դավանական վեճեր առաջացնել և երկիրը մշտապես անկայուն և անապահով վիճակի մեջ պահել։ Լիբանանում քրիստոնեական և մուսուլմանական դավանական խմբերի առկայությունը օգտագործվում էր որպես պատրվակ միջամտելու համար երկրի ներքին գործերին։

Նույն 1920 թ. սեպտեմբերին կազմվում է «ալաուիների պետությունը»։ Դամասկոսի և Հալեպի նահանգապետներ նշանակվեցին ֆեոդալական ծագում ունեցող և թուրքական նախկին բարձրաստիճան անձնավորություններ (Հազգի ալ Ազմա, Սուբհի Բարաքաթ), որոնք անձնվիրաբար ծառայեցին օկուպանտներին։ 1921 թ. Ալեքսանդրետի սանջաքին շնորհվեց ինքնավարություն. նույն տարին կազմվեց Ջեբել Դրուզի «պետությունը»։ Սիրիան չորս պետությունների բաժանումը պահպանվեց մինչև 1936 թ.։ Այսպիսով, Սիրիան անդամահատելու միակ նպատակը եղել է արհեստական այնպիսի սահմաններ ստեղծելը, որոնք թույլ չտային արաբներին համախմբվելու իրենց ազգային նպատակներին հասնելու համար։ Բացի այդ, երկրի անդամահատումը խանգարում էր նրա տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացմանը։

Երկիրը մասնատելու քաղաքականությունը ավելի խորացրեց տնտեսական ճգնաժամը և անելանելի վիճակի մեջ դրեց մանդատային իշխանություններին։ 1922 թ. ամբողջ Սիրիայում տեղի ունեցած ապստամբությունից հետո ֆրանսիական կառավարությունը Գուրոյի փոխարեն նշանակեց գեներալ Վեյգանին, որը իր ռեակցիոն քաղաքականությամբ ավելի մեծ եռանդով շարունակում էր արաբ գյուղացիներին գնդակահարելու և գյուղերը հիմնահատակ անելու գործը։ Օկուպացիոն իշխանությունների տնտեսական և քաղաքական ճնշումը ուժեղ կերպով հարվածեց ոչ միայն քաղաքի ու գյուղի աշխատավորության շահերին։ Հասարակության բոլոր խավերի զժգոհությունը հանգեցրեց համառ պայքարի ծավալմանը՝ ընդդեմ ֆրանսիական օկուպանտների։ Այս պայքարի մեջ ներգրավվեցին ոչ միայն գյուղացիությունը և քաղաքական հրապարակ եկած բանվոր դասակարգը, այլ նաև ազգային մանր և խոշոր բուրժուազիան, ինտելիգենցիան և առանձին ֆեոդալներ։ Օկուպանտների կողմում էին միայն մի խումբ ֆեոդալներ և իմպերիալիզմի հենարանը կազմող կոմպրադորական բուրժուազիան։

Այսպիսին էր ֆրանսիական օկուպանտների հաստատած քաղաքական ռեժիմը։ Այն բոլոր դարցերը, որոնք դրվել էին 1920—1922 թթ. հեղափոխական դեպքերի ժամանակ՝ մնացին չլուծված, գաղութարարների դեմ մղվող համաժողովրդական պայքարը շարունակվում էր նոր թափով։ Մասսայական հուզումների այս բոլոր դրսևորումները նախակարապետն էին այն մեծ ապստամբության, որն ընդգրկեց ամբողջ Սիրիան Դրուզ Սուլթան Աթրաշի ղեկավարությամբ՝ հանուն Սիրիայի անկախության և պետական սուվերենության.

---

43 Այս կոմիտեի մեջ մտնում էին բուրժուական նացիոնալիզմի ներկայացուցիչները։ Կոմիտեն ծնվում Ազգերի լիգային կից մշտական պատվիրակություն ուներ հայտնի պանիսլամիստ, թուրքական պառլամենտի նախկին անդամ Շեքիբ Արսլանի գլխավորությամբ։ Պատվիրակությունը հրատարակում էր „La Nation arabe" ամսագիրը։